# ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ՍՏՈՒԳՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՐԱՄԱՆ ԱԴՐ. ԽՍՀ-Ի ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ

№ 1214, 5 ԱՊՐԻԼԻ 1938 թ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԱԴՐ. ԽՍՀ-Ի ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏ

1938 թ.

371.2
Դ-92

371.2
Դ--92
4 APR 2013
2802-10
2439
38

ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ՍՏՈՒԳՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

# Հ Ր Ա Մ Ա Ն

## ԱԴՐ. ԽՍՀ-Ի ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ

№ 1214. 5 ապրիլի 1938 թ.

### § 1.

*Հաստատել Ադր. ԽՍՀ-ի տարրական, ոչ լրիվ միջնակարգ և միջնակարգ դպրոցներում ստուգողական քննությունների անցկացնելու մասին կցված հրահանգը:*

### § 2.

*Նախ. ԽՍՀ-ի Լուսժողկոմատին, ԼՂԱՄ արզի լուսբաժնին և Բաքլուսբաժնին՝ արգելել ստուգողական քննությունների անցկացման տեղական հրահանգների և քննությունների հանրագումարների վերաբերյալ հաշվետվության ձևերի հրատարակումը:*

ԱԴՐԲԵՋԱՆՑԱՆ ԽՍՀ-Ի ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ՝ ՄԱՄԵԴՈՎ.

# ՀՐԱՀԱՆԳ

## ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ՍՏՈՒԳՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

*§1. Տարեկան ստուգողական փոխադրման և ավարտման քննությունները անց են կացվում Ադր.ԽՍՀ-ի բոլոր դպրոցներում և հանդիսանում են աշակերտների գիտելիքների տարեկան յեզրափակիչ հաշվառման ձևը:*

*§2. Դպրոցներում ստուգողական քննություններն անց են կացվում նպատակ ունենալով հայտաբերել փաստական գիտելիքները և դրանք աշակերտների կողմից յուրացնելու կայունությունը, նրանց անցած ուսման դասընթացի սահմաններում, սահմանել աշակերտի պատրաստվածությունը՝ նրան վոչ լրիվ միջնակարգ և միջնակարգ դպրոցի բարձր դասարանում, տեխնիկումում կամ բարձրագույն ուսումնական հաստատությունում հաջողությամբ սովորելու համար:*

## II. ՍՏՈՒԳՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՅԵՎ ԴՐԱՆՑ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

*§3. Ստուգողական քննությունների յեն յենթարկվում բոլոր աշակերտները՝ նրանց դասարանից դասարան փոխադրելիս և դպրոցն ավարտելիս, բացառությամբ տարրական, վոչ լրիվ միջնակարգ և միջնակարգ դպրոցների 1, 2, և 3 դասարանների աշակերտների:*

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ —. *Դպրոցների սկզբնական դասարանների (1, 2 և 3) աշակերտների փոխադրումը կամ նրանց յերկրորդ տարին թողնելը, կատարվում է աշակերտ-*

ների գիտելիքների տարեկան գնահատականների (թվանշանների) հիման վրա:

§ 4· Ստուգողական քննությունների չեն թույլատրվում այն աշակերտները, վորոնք քննությունների առարկաներից ունեն ավելի քան 3 վատ գնահատական (թվանշան)· այդ աշակերտները թողնվում են նույն դասարանում դասընթացը կրկնելու համար:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ·— Դրանից բացառություն են կազմում միայն այն աշակերտները, վորոնց անհառաջադիմությունն առաջ է յեկել հիվանդության, նույնպես և ուրիշ հարգելի պատճառներով (որինակ՝ տեղափոխությունները):

Մանկավարժական խորհրդի վորոշումով, հաստատված դպրոցի դիրեկտորի կողմից, այդ աշակերտների քննությունները փոխադրվում են աշնանը:

§ 5· Առողջությամբ առանձնապես թույլ աշակերտներին, վորոնք դրա մասին ունեն դպրոցական բժշկի յեզրակացությունը կամ պետական համապատասխան բուժհիմնարկության յեզրակացությունը, դպրոցի դիրեկտորը կարող է փոխադրել հետևյալ դասարանն առանց քննության, յեթե ուսումնական տարվա ընթացքում նրանք քննության առարկաներից ունեցել են «բավարար» գնահատականից (թվանշանից) վոչ ցածր հառաջադիմություն:

§ 6· Տարրական դպրոցի ավարտական 4-րդ դասարանների, վոչ լրիվ միջնակարգ դպրոցի 7-րդ դասարանների և միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանների աշակերտների քննությունները, գարնանային քննությունների ժամանակ աշակերտների հիվանդության դեպքում, դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից կարող են փոխադրվել աշնանը· առանձին դեպքերում այդ աշակերտներն ուսումնական տարվա ընթացքում լավ առաջադիմության առկայությամբ, կարող են քննություններից բոլորովին ազատվել և շրջանային-քաղաքային Լուսբաժնի վարիչի թույլատվությամբ ավարտական ստանալ, ուսումնական տարվա բոլոր քառորդների համար ըստ տարեկան գնահատականների (թվանշանների) նրանց տալով համապատասխան վկայական կամ ատեստատ:



Նման բոլոր դեպքերի մասին, շրջանային-քաղաքային Լուսբաժինների վարիչները պարտավոր են հայտնել մարզլուսբաժնի վարիչին, Նախ· ԱԽՍՀ-ի և Ադր·ԽՍՀ-ի Լուսավորության ժողկոմներին:

§ 7· Տվյալ դասարանների համար քննությունների մեջ չմտցված առարկաներից վատ թվանշաններ ունեցող աշակերտները, գարնանային քննությունների ժամանակաշրջանում, այդ առարկաներից լրացուցիչ քննությունների յեն յենթարկվում: Դպրոցների դիրեկտորներն ու վարիչները պարտավոր են քննությունների ցուցակի մեջ դրա համար անհրաժեշտ ժամանակ հատկացնել:

§ 8· Քննությունները անց են կացվում հետևյալ առարկաներից և հետևյալ ժամկետներում·

4-րդ դասարաններում· (Տարրական դպրոցի համար – ավարտական) —մայրենի լեզվից (գրավոր և բանավոր), թվաբանությունից (գրավոր և բանավոր), աշխարհագրությունից և պատմությունից (բանավոր), ռուսաց լեզվից (գրավոր և բանավոր), ընդամենը 8 քննություն, դրանցից՝ 3 գրավոր և 5 բանավոր, մայիսի 20-ից մինչև հունիսի 5-ը ներառյալ – ընդամենը 17 որացուցային որ·

5-րդ դասարաններում· Մայրենի լեզվից (գրավոր և բանավոր), ռուսաց լեզվից (գրավոր և բանավոր), թվաբանությունից (գրավոր և բանավոր), աշխարհագրությունից (բանավոր)· ընդամենը 7 քննություն,, դրանցից՝ 3 գրավոր և 4 բանավոր· մայիսի 20-ից մինչև հունիսի 5-ը ներառյալ, — ընդամենը 17 որացուցային որ·

6-րդ դասարաններում· Մայրենի լեզվից (գրավոր և բանավոր), ռուսաց լեզվից (գրավոր և բանավոր), թվաբանությունից (գրավոր և բանավոր), բուսաբանությունից, աշխարհագրությունից (բանավոր)· ընդամենը 8 քննություն, դրանցից՝ 3 գրավոր և 5 բանավոր, մայիսի 20-ից մինչև հունիսի 5-ը ներառյալ,—ընդամենը 17 որացուցային որ:

7-րդ դասարաններում· (վոչ լրիվ միջնակարգ դպրոցի համար-ավարտական)—մայրենի լեզվից (գրավոր և բանավոր),

գրականությունից (գրավոր և բանավոր), ռուսաց լեզվից (գրավոր և բանավոր), հանրահաշվից (գրավոր), յերկրաչափությունից ԽՍՀՄ-ի Սահմանադրությունից, ֆիզիկայից, կենդանաբանությունից, աշխարհագրությունից, ոտար լեզվից (բոլորը բանավոր). ընդամենը 13 քննություն, դրանցից՝ 4 գրավոր և 9 բանավոր, մայիսի 20-ից մինչև հունիսի 15-ը ներառյալ,— ընդամենը 27 որացուցային որ.

8-րդ դասարաններում. Մայրենի լեզվից (գրավոր), գրականությունից (գրավոր և բանավոր), ռուսաց լեզվից (գրավոր և բանավոր), հանրահաշվից (գրավոր և բանավոր), յերկրաչափությունից, մարդու անատոմիա – ֆիզիոլոգիայից ոտար լեզվից (բոլորը բանավոր). ընդամենը 10 քննություն, դրանցից՝ 4 գրավոր 6 բանավոր, մայիսի 20-ից մինչև հունիսի 12-ը, ընդամենը 24 որացուցային որ:

9-րդ դասարաններում. Մայրենի լեզվից (գրավոր), գրականությունից (գրավոր և բանավոր), ռուսաց լեզվից (գրավոր և բանավոր), յերկրաչափությունից (բանավոր), հանրահաշվից (գրավոր), յեռանկյունաչափությունից, ֆիզիկայից, եվոլյուցիոն ուսմունքից, քիմիայից և աշխարհագրությունից (բոլորը բանավոր), ընդամենը 12 քննություն, դրանցից՝ 4-ը գրավոր և 8 բանավոր, մայիսի 20ից մինչև հունիսի 15-ը ներառյալ,— ընդամենը 27-որացուցային որ.

10-րդ դասարաններում. Մայրենի լեզվից (գրավոր յեվ բանավոր), գրականությունից (գրավոր և բանավոր), ռուսաց լեզվից (գրավոր և բանավոր), հանրահաշվից (գրավոր և բանավոր), յերկրաչափությունից (գրավոր և բանավոր), յեռանկյունաչափությունից, ֆիզիկայից, քիմիայից, ԽՍՀՄ-ի ժողովուրդների պատմությունից, ոտար լեզվից (բոլորը բանավոր). ընդամենը 15 քննություն, դրանցից՝ 5 գրավոր և 10 բանավոր, մայիսի 20 ից մինչև հունիսի 20-ը ներառյալ,— ընդամենը 32 որացուցային որ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Բոլոր ռուսական, հայկական, վրացական, թալիշական, թաթարական և մյուս դպրոցներում ադրբեջաներեն լեզվից անցկացնել գրավոր և բանավոր քննություններ:

§ 9. Քննությունների ժամանակ, գիտելիքների ստուգումն անց է կացվում Ադր. ԽՍՀ-ի Լուսժողկոմատի կողմից տվյալ դասարանի համար սահմանված ամբողջ ծրագրային նյութի ծավալով:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— 10-րդ դասարաններում մայրենի լեզվից և գրականությունից բանավոր քննություններն անց են կացվում միաժամանակ. սակայն դրանց համար գնահատականները (թվանշանները) դրվում են առանձին-առանձին:

§ 10. Այն դպրոցները, վորտեղ ուսման վորևէ առարկայի ավանդումը հետ է մնում Ադր. ԽՍՀ-ի Լուսժողկոմատի սահմանած ծրագրից նրանց դիրեկտորներն ու վարիչները պարտավոր են ուսման չորրորդ քառորդի սկզբին այդ մասին հաղորդել շրջանային-քաղաքային Լուսբաժնի վարիչին և բացատրություններ ներկայացնել:

Դպրոցների այդ հաղորդումների առթիվ շրջանային-քաղաքային Լուսբաժինների վարիչները պարտավոր են անձամբ, դպրոցի դիրեկտորի հետ մեկտեղ, անհրաժեշտ միջոցներ ձեռք առնել՝ ապահովելու ուսումնական ծրագրերի կատարումը դպրոցի կողմից, թույլատրելով միայն բացառիկ դեպքերում, յերբ դասարանը, չնայած ձեռք առած բոլոր միջոցներին, ուսման ծրագիրը լրիվ չի կատարել, աշակերտների քննությունները կատարել մինչև ուսման տարվա վերջը փաստորեն անցած ծրագրային նյութի ծավալով:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ—. Ծրագրային նյութն անցնելու գործում հետ մնալու դեպքում 10-րդ դասարանների աշակերտներին թողարկելու թույլատվությունն անձամբ տալիս են Ադր. ԽՍՀ-ի կամ Նախ. ԱԽՍՀ-ի լուսավորության ժողովրդական կոմիսարները և մարզլուսբաժինն ու Բաքլուսբաժինը:

§ 11. Բոլոր դասարաններում բանավոր քննությունները կատարվում են տոմսերով:

Քննությունների համար տոմսերը պատրաստում է տվյալ առարկայի դասատուն և քննությունների ժամանակ տալիս աշակերտներին։

Յուրաքանչյուր տոմսը բաղկացած է քննությունների ծրագրի զանազան բաժիններից աշակերտների հասկանալու համար պարզ և ընթեռնելի գրված յերկու յերեք հարցից։

Յուրաքանչյուր առարկայի վերաբերյալ տոմսերի քանակը 40–50-ից ավել չպիտի լինի։

Ամբողջովին վերցրած բոլոր տոմսերի հարցերը պիտի սպառեն քննությունների ամբողջ ծրագիրը։

Քննության կանչված աշակերտը տոմսը վերցնում է անձամբ։ Յեթե աշակերտը դժվարանում է վերցրած տոմսի մեջ տրված հարցին պատասխանել, նա իրավունք ունի յերկրորդ տոմսը վերցնելու։

Անհրաժեշտ դեպքում, մանավորապես յերբ աշակերտը դժվարանում է պատասխանել իր վերցրած տոմսում տրված հարցերին, ուսուցիչը կամ ասիստենտը կարող են լրացուցիչ հարցեր տալ աշակերտին՝ նրա փաստական գիտելիքները դրսևորելու նպատակով։

Այն տոմսը, վորով աշակերտը պատասխան է տվել, յերկրորդ անգամ դասարանի տվյալ խմբում չի ոգտագործվում։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ—. Դպրոցների 4-րդ, 5-րդ և 6-րդ դասարաններում, դպրոցի դիրեկտորի (վարիչի) հայեցողությամբ, աշակերտների քննությունները կարող են անցկացվել նաև բանավոր (առանց տոմսերի) հարցատվությամբ։ Բանավոր հարցատվության ժամանակ արգելվում է գործածել «անհատական հարցաթերթիկներ», վորոնք նախորոք սահմանում են աշակերտի կողմից պատասխանելիք հարցերը։

§ 12. Յուրաքանչյուր ուսուցիչ, վորի առարկան մտցված է քննությունների մեջ, պարտավոր է ապրիլի 25-ից վոչ ուշ, ուսման ծրագրի և դասագրքի հիման վրա ամեն մի դասարանի համար իր առարկայից կազմել քննությունների ծրագիր և ներկայացնել դպրոցի դիրեկտորի (վարիչի) հաստատմանը։



Խնդիրները (մաթեմատիկայից, ֆիզիկայից և քիմիայից), մաթեմատիկական որինակները և քննությունների ժամանակ քերականական տեքստերի վերլուծումը արգելվում է մտցնել քննությունների ծրագրի մեջ։ Դրանք աշակերտներին են տրվում միայն քննությունների ժամանակ։

§ 13. Քննությունների ծրագիրը, հաստատված դպրոցի դիրեկտորի (վարիչի) կողմից, վոչ ուշ քան քննություններից 15 որ առաջ պետք է բացատրվի աշակերտներին։

§ 14. Քննությունների ժամանակ գրավոր աշխատանքները մայրենի և ռուսաց լեզվից 4, 5, 6, 7, 8, 9, և 10-րդ դասարաններում պետք է կայանան թելադրությունից, գրականությունից՝ 7-րդ դասարաններում-շարադրումից, 8-րդ 9-րդ և 10-րդ դասարաններում շարադրություն գրականության թեմայից, ուսումնական տարվա ընթացքում անցած ծրագրային նյութի սահմաններում։ Շարադրության համար տրվում է յերեք թեմա, աշակերտներին իրավունք տալով ընտրելու դրանցից մեկն ու մեկը։

§ 15. Քննությունների ժամանակ գրավոր աշխատանքները մաթեմատիկայից պետք է կայանան՝ 4, 5, և 6-րդ դասարաններում-թվաբանության մեկ խնդրից և յերկու որինակից. 7-րդ և 8-րդ դասարաններում – հանրահաշվի մեկ խնդրից և յերկու որինակից. 9-րդ դասարաններում հանրահաշվի մեկ խնդրից և յերկու որինակից. 10-րդ դասարաններում-հանրահաշվի մեկ խնդրից և յերկու որինակից, յերկրաչափության մեկ խնդրից յեռանկյունաչափության կիրառումով։ Խնդիրները և որինակները պետք է տրվեն յերկու վարիանտով, դժվարության միատեսակ չափով։

§ 16. Թելադրության տեքստերը, գրականությունից շարադրությունների թեմաները, մաթեմատիկայից խնդիրները և որինակները բոլոր դասարանների աշակերտների համար (բացառությամբ 10-րդ դասարանների) յուրաքանչյուր ուսման առարկայի և դասարանի վերաբերյալ նախապատրաստում է նրա դասատուն և հաստատում է դպրոցի դիրեկտորը (վարիչը)։

§ 17․ Թելադրության տեքստերը քննությունների համար, գրականության շարադրության թեմաները, մաթեմատիկայի խնդիրներն ու օրինակները 10–րդ դասարանների աշակերտների համար մշակվում են և հաստատվում անձամբ Ադր․ԽՍՀ–ի լուսավորության ժողովրդական կոմիսարի, ՆԱԽ․ Ա․ԽՍՀ–ի լուսավորության ժողովրդական կոմիսարի, Բաքլուսբաժնի և Մարզլուսբաժնի վարիչների կողմից և հանձնվում են դպրոցների դիրեկտորներին՝ գրավոր քննություններից 2–3 օր առաջ:

Դպրոցների դիրեկտորներն այդ թեմաները դասատուներին հայտնում են միայն քննությունների օրը:

§ 18․ Աշակերտները բոլոր գրավոր աշխատանքները կատարում են դպրոցի վարչության կողմից նախօրոք պատրաստած թղթի վրա, նշված տվյալ դպրոցի կնիքով:

§ 19․ Ուսման այն առարկաներից, որոնց նկատմամբ սահմանված են գրավոր և բանավոր քննություններ, առաջ կատարվում են գրավոր քննություններ: Աշակերտների գրավոր աշխատանքները ուսուցչի և ասիստենտի կողմից պետք է ստուգվեն, գնահատվեն և հանձնվեն դպրոցի դիրեկտորին՝ տվյալ առարկայի նկատմամբ, անպայման բանավոր քննություններն սկսվելուց առաջ:

§ 20․ Ստուգողական քննությունները դպրոցներում անց են կացվում դպրոցի դիրեկտորի (վարիչի) հաստատած ցուցակով:

Քննությունների ցուցակը պետք է դպրոցում փակցվի ոչ ուշ, քան ստուգողական քննություններն սկսելուց 10–օր առաջ:

§ 21․ Ցուցակները կազմելիս պետք է ղեկավարվել հետևյալով․ ա) Ադր․ԽՍՀ–ի բոլոր դպրոցներում քննություններն սկսվում են մայիսի 20–ից:

բ) Թույլատրվում է մի օրում անցկացնել միայն մեկ քննություն բանավոր կամ գրավոր:

գ) Յուրաքանչյուր գրավոր աշխատանքի համար հատկացվում է՝ 4–րդ դասարանում – մեկ ժամ, 5–7 դասարաններում –յերկու ժամից ոչ ավել, 8–10–րդ դասարաններում 3 ժամից ոչ ավել:



դ) Բանավոր քննությունների համար 4–7–րդ դասարաններում հատկացվում է օրական ոչ ավել քան 4 ուսումնական ժամ, 8–10–րդ դասարաններում – օրական ոչ ավել քան 5 ուսումնական ժամ:

ե) Դասամիջոցները պարտադիր են յուրաքանչյուր ակադեմիական ժամից հետո, միայն բանավոր քննությունների ժամանակ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ․— Քննությունները դասարանում մի առարկայից (բանավոր կամ գրավոր) պետք է վերջանա մի օրում: Դասարանի աշակերտների քանակը շատ լինելու դեպքում, բանավոր քննություններն անցկացնելիս, թույլատրվում է դասարանը բաժանել յերկու մասի (օրինակ՝ դասարանի կեսը քննությունները տալիս են առավոտյան ժամը 9–ից, իսկ մյուս մասը՝ ցերեկվա ժամը 2–ից):

§ 22․ Ստուգողական քննություններն անց են կացվում սովորական դասարանային պայմաններում, տվյալ դասարանի բոլոր աշակերտների կամ դասարանի մի մասի ներկայությամբ, յեթե դասարանը բաժանված է խմբերի:

Քննություններն անցած աշակերտներին իրավունք է տրվում մնալ դասարանում կամ դուրս գալ դասամիջոցին: Գրավոր քննությունն անցկացնելիս, աշակերտը, որը կատարել է գրավոր աշխատանքը և հանձնել ուսուցչին, պարտավոր է թողնել այն դասարանը, որտեղ քննությունն է տեղի ունենում:

§ 23․ Ուսման առարկայի քննություններն անց է կացնում այն ուսուցիչը, որն այդ առարկան ավանդում է տվյալ դասարանում: Քննությանը, որպես ասիստենտ, ներկա յե լինում նույն դպրոցի այդ առարկայի (կամ նման առարկայի) դասատուներից մեկը՝ դպրոցի դիրեկտորի նշանակումով:

## III. ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ 10-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

§ 24․ 10–րդ դասարաններում ավարտական քննություններն անց է կացնում հանձնաժողովը՝ դպրոցի դիրեկտորի նախագահությամբ և հետևյալ կազմով․— Տվյալ առարկան դասավան-

ղող ուսուցիչը, դպրոցի դիրեկտորի նշանակած ասիստենտը և ժողովրդական կրթության համապատասխան բաժնի ներկայացուցիչը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— 1) Վորպես ժողովրդական կրթության բաժնի ներկայացուցիչ ներգրավում են պրոֆեսորները, համալսարանների, մանկավարժական և ուսուցչական ինստիտուտների դոցենտները, մանկավարժական ուսումնարանների դասատուները, դպրոցական տեսուչները: 2) Դպրոցի դիրեկտորը, մինչև քննությունների սկսելը, պարտավոր է հանձնաժողովի անդամներին ծանոթացնել սույն հրահանգի հետ:

§ 25. Քննությունների ժամանակ 10-րդ դասարանների աշակերտների գրավոր աշխատանքների, նույնպես և նրանց բանավոր պատասխանների գնահատականը տալիս է հանձնաժողովը: Դպրոցի դիրեկտորի յեզրակացությունը վերջնական է հանդիսանում:

## IV. ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՅԵՎ ԱՎԱՐՏՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

§ 26. Աշակերտների փոխադրումը բարձր դասարանները կամ նրանց դպրոցն ավարտելը կարող է կատարվել միայն այն պայմանով, յեթե տարվա ընթացքում ուսման դասընթացի յուրաքանչյուր առարկայից աշակերտի հառաջադիմությունը «միջակ» թվանշանից ցած չի գնահատված:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Նկարչությունից, գծագրությունից, յերգեցողությունից և ֆիզկուլտուրայից «միջակից» ցածր գնահատականները (թվանշանները) աշակերտին հետևյալ դասարանը փոխադրելու համար արգելք լինել չեն կարող:

§ 27. Քննությունների մեջ չմտցրված առարկաներից ընդհանուր տարեկան գնահատականը (թվանշանը) սահմանվում է ուսումնական տարվա բոլոր քառորդների ընթացքում աշակերտների ստացած գնահատականների (թվանշանների) հիման վրա:



Քննությունների մեջ մտցրված առարկաներից ընդհանուր տարեկան գնահատականը (թվանշանը) սահմանվում է քննությունների ժամանակ տվյալ առարկայից աշակերտների ստացած գնահատականների (թվանշանների) հիման վրա, հաշվի առնելով ուսումնական տարվա բոլոր քառորդների ընթացքում ստացած գնահատականները (թվանշանները):

Յուրաքանչյուր առարկայից ընդհանուր տարեկան գնահատականի (թվանշանի) հիման վրա, դպրոցի մանկավարժական խորհուրդը վճռում է աշակերտին հետևյալ դասարանը փոխադրելու կամ նրա կողմից դպրոցն ավարտելու հարցը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Մայրենի լեզվից, ռուսաց լեզվից և գրականությունից տարեկան հանրագումարային գնահատականներում դրվում են առանձին գնահատականներ (թվանշաններ) գրավոր և բանավոր պատասխանների համար:

§ 28. Ուսումնական տարին ավարտելուց աշակերտներին տրվում են — ա) Վկայական — տարրական կամ վոչ լրիվ միջնակարգ դպրոցն ավարտածներին:

բ) Ատտեստատ — միջնակարգ դպրոցն ավարտածներին, ընդ վորում նրանց, ովքեր հիմնական առարկաներից լավ վարքից ունեն, «գերազանց» թվանշաններ, իսկ մյուս առարկաներից (գծագրությունից, յերգեցողությունից, նկարչությունից, յերաժշտությունից, ֆիզկուլտուրայից) «լավ» թվանշանից վոչ ցածր—տրվում է հատուկ ատտեստատ՝ նշելով, վոր նրանց իրավունք է վերապահվում բարձրագույն դպրոց մտնել առանց քննությունների:

§ 29. Այն աշակերտները, վորոնք բոլոր հիմնական առարկաներից ստացել են ընդհանուր — տարեկան «գերազանց» գնահատականներ (թվանշաններ), իսկ գծագրությունից, յերգեցողությունից, նկարչությունից, յերաժշտությունից, ֆիզկուլտուրայից «լավ»-ից վոչ ցածր և վարքից «գերազանց» գնահատական ունեն, մանկավարժական խորհրդի վորոշումով պարգևատրվում է գովասանագրերով:

§ 30. Տարրական, ոչ լրիվ միջնակարգ և միջնակարգ դպրոցի աշակերտներին, որոնք աշնան համար քննություններ են ստացել և այս կամ այն պատճառով ուրիշ դպրոց են փոխադրվում, դպրոցի դիրեկտորի կամ վարիչի կողմից այդ մասին տեղեկանք է տրվում:

## V. ԱՇՆԱՆԱՅԻՆ ՍՏՈՒԳՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

§ 31. Աշնանային ստուգողական քննություններն Ադր. ԽՍՀ-ի բոլոր դպրոցներում անց են կացվում օգոստոսի 20-ից մինչև 27-ը ներառյալ, ամուր ցուցակով հաստատված դպրոցի դիրեկտորի կողմից և հայտարարված աշակերտներին մինչև նրանց ամառային արձակուրդներ տալը:

§ 32. Այն աշակերտները, որոնք գարնան քննությունների առարկաներից յերեքից ավել ընդհանուր տարեկան «վատ» յեվ «շատ վատ» գնահատականներ (թվանշաններ) են ստացել, թողնվում են նույն դասարանում դասընթացը կրկնելու համար յեվ աշնանային քննություններին չեն թույլատրվում:

§ 33. Այն աշակերտները, որոնք աշնան կրկնակի քննություններից հետո հիմնական առարկաներից թեկուզ և մեկից վերջնական ընդհանուր հանրագումարային «վատ» կամ «շատ վատ» գնահատական (թվանշան) են ստացել, թողնվում են դասընթացը կրկնելու համար: Աշակերտների պայմանական փոխադրումներն արգելվում են:

§ 34. Գրավոր աշխատանքների տեքստերը, շարադրության թեմաները, խնդիրները և օրինակները՝ աշնանային կրկնակի քննություններն անցկացնելու համար կազմում են համապատասխան ուսումնական դիսցիպլինների դասատուները և հաստատվում դպրոցի դիրեկտորի կողմից:

Բանավոր քննությունների համար նյութ է ծառայում տվյալ առարկայից գարնան ստուգողական քննությունների ծրագիրը:

§ 35. Դպրոցների դիրեկտորները (վարիչները) պարտավորվում են օգնություն ցույց տալ աշակերտներին աշնան քննություններին պատրաստվելու համար (դպրոցական շենքեր տրամադրելը, խմբակային պարապմունքների կազմակերպումը և այլն):



Աշնանային կրկնակի քննություններ ստացած յուրաքանչյուր աշակերտի նախապատրաստության համար կոնկրետ միջոցառումները նշվում են դպրոցի մանկավարժական խորհրդի յեզրափակիչ նիստում (այսինքն՝ գարնան քննությունները վերջանալիս):

§ 36. Մանկավարժական խորհրդի որոշումը յուրաքանչյուր աշակերտի մասին (յերկրորդ տարվան թողնելը, աշնան կրկնակի քննություններ նշանակելը) դպրոցի դիրեկտորը հայտնում է ծնողների գիտության:

VI § 37. Տվյալ հրահանգը վերաբերվում է նաև ոչ—ադրբեջանական տարրական ոչ լրիվ միջնակարգ դպրոցներին, որոնք գտնվում են Ադր. ԽՍՀ-ի տերիտորիաներում:

ծանոթություն § 8.

2439
38

## VII. ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

§ 38. Գարնան քննությունների ժամանակ աշակերտների կատարած գրավոր աշխատանքների բոլոր տեքստերը (թելադրությունները, շարադրության թեմաները, խնդիրները, օրինակները և այլն) անպայման պահվում են դպրոցում յեվ դպրոցի դիրեկտորի (վարիչի) կողմից պետք է ներկայացվեն դպրոցական տեսչին՝ աշակերտների քննությունների անցկացման ճշտությունը նրա կողմից ստուգելիս:

§ 39. Քննություններն անցկացրած յուրաքանչյուր ուսուցիչ իր առարկայից քննությունները վերջանալու օրը ճշտորեն լրացնում և դպրոցի դիրեկտորին է ներկայացնում քննությունների արձանագրությունը՝ յուրաքանչյուր աշակերտի գիտելիքների գնահատականներով (թվանշաններով), իր և իր ասիստենտի ստորագրություններով:

§ 40. Սառւգողական փոխադրական և ավարտական քննությունների ընդհանուր հանրագումարները քննարկվում են դպրոցի մանկավարժական խորհրդի յեզրափակիչ նիստում:

§ 41. Դպրոցի դիրեկտորը (վարիչը) քննությունների ընթացքի մասին տեղեկագիրը Ադր. ԽՍՀ-ի Լուսժողկոմատի սահմանած ձևով հանձնում է շրջ. քաղ. Լուսբաժնին:

4-րդ 5-րդ և 6-րդ դասարանների համար հունիսի 8-ին, 7-8-9-10-րդ դասարանների համար 22-ին

§ 42. Նախ. ԱԽՍՀ-ում, ԼՂԱՄ—ում և Բաքվում ժողովրդական կրթության շրջանային (քաղաքային) բաժինները քննությունների հանրագումարների մասին տեղեկագրերը ներկայացնում են Նախ. ԱՍԽՀ-ի Լուսժողկոմատին, ԼՂԱՄարզի Մարզլուսբաժնին և Բաքլուսբաժնին:

4-րդ 5-րդ և 6-րդ դասարանների համար մինչև հունիսի 10-ը, 7-րդ 8-րդ 9-րդ և 10-րդ « » « » 26-ը:

§ 43. Նախ. ԱԽՍՀ-ի Լուսժողկոմատը, ԼՂԱմարզի մարզլուսբաժինը և Բաքլուսբաժինը, նույնպես և շրջլուսբաժինները քննությունների մասին տեղեկագրերը ներկայացնում են Ադր. ԽՍՀ-ի Լուսժողկոմատին (չտալ):

4-րդ 5-րդ և 6-րդ դասարանների համար մինչև հունիսի 15-ը. 7-րդ 8-րդ 9-րդ « » « » 28-ը.

Կցվում են 1) Քննությունների հանրագումարների մասին միասնական տեղեկագրի ձևը:
2) Քննությունների արձանագրության ձևը:

Ադրբեջանյան ԽՍՀ-ի Լուսժողկոմատի միջնակարգ դպրոցի վարչության պետ՝ Տ. ԽԱՍՄԱՄԵԴՈՎ.

Ադրբեջանյան ԽՍՀ-ի Լուսժողկոմատի տարրական դպրոցի պետի տեղակալ՝ Ի·ԿԱՐՑԱԳԻ



# ՏԵՂԵԿԱԳԻՐ

................................ մարզի ________________ ................................ շրջանի

................................ դպրոցի քննությունների հանրագումարների մասին.

(դիրեկտորի կողմից ուղարկվում է ________________ շրջլուսբաժնին

Լուսբաժնի կողմից ուղարկվում է ________________ մարզլուսբաժնին)

| Դասարանի անունը | Ընդամենը աշակերտներ | Նրանցից: Թույլատրված են քննությունների | Նրանցից: Փոխադրված են հետեվյալ դաս. առանց քննութ. | Նրանցից: Քննությունները փոխադրված են աշնանը | Նրանցից: Թողնված են 2-րդ տարվան առանց քննությունների | Քննություն են տվել | Նրանցից: փոխադրված են հետեվյալ դասարանը | Նրանցից: Թողնված են կրկնողական դասընթացում | Նրանցից: Աշնանային քննություններ են ստացել | Ընդամենը փոխադրված են | Ընդամենը թողնված են | Ընդամենը քննություններ փոխադրված են աշնանը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 |
| 1. .................. | | | | | | | | | | | | |
| 2. .................. | | | | | | | | | | | | |
| 3. .................. | | | | | | | | | | | | |
| 4. .................. | | | | | | | | | | | | |
| Ընդամենը .................. | | | | | | | | | | | | |
| 5. .................. | | | | | | | | | | | | |
| 6. .................. | | | | | | | | | | | | |
| 7. .................. | | | | | | | | | | | | |
| Ընդամենը .................. | | | | | | | | | | | | |
| 8. .................. | | | | | | | | | | | | |
| 9. .................. | | | | | | | | | | | | |
| 10. .................. | | | | | | | | | | | | |
| Ընդամենը .................. | | | | | | | | | | | | |
| Ընդամենը .................. | | | | | | | | | | | | |
| Գումարը .................. | | | | | | | | | | | | |

Դիրեկտոր ________________

Դիրեկտորի ոգնական ուսմասի գծով ................................

Ծանոթություն. 1) 1—3 դասարանների համար տեղեկությունները գրվում են 1. 11, 12 սյունակներում. 2) Նույնպիսի ձևով տեղեկագրերը ներկայացվում են Ադր. ԽՍՀ-ի Լուսժողկոմատին.

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Դպրոցի դիրեկտոր ........................................

„.........“ ........................................ 1938 թ.

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

........................................ մարզի ........................................ շրջանի

........................................ դպրոցի ........................................

դասարանում ........................................ քննությունների:

(առարկան)

Ուսուցչի ազգանունը, անունը, հայրանունը ........................................

........................................................................................................

Ասիստենտի ազգանունը, անունը, հայրանունը ........................................

(10-րդ դասարանների համար — նաև հանձնաժողովի անդամների ազգանունները)

| Հերթական համար | Աշակերտի ազգանունը, անունը | Գնահատական (թվանշան) | Ծանոթություն |
|---|---|---|---|
| | | | |

Ուսուցիչ՝ ........................................

Ասիստենտ՝ ........................................

(10-րդ դասարանների համար հանձնաժողովի անդամները)

„.........“ ........................................ 1938 թ.

Сдано в производство 11/IV—38 г.
Разрешено к печати 25/IV—38 г.
Колич. печатных знаков—47.880
Количество печатных листов—$1^1/_4$

нт 2113. Ст. 364 А—5 Тип. „III Интернационал“ Баку, улица
Саратовца-Ефимова, 29 Зак. № 1559. Тираж 1500

ՀՀ Ազգային գրադարան
NL0227410

47. 922

38

О проведении проверочных испыта
В ШКОЛАХ

*Приказ по Народному Комиссариату Просвещ*
*АзССР № 1214 от 5 апреля 1938 года.*